

ՍԱՌՆԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ

ՍԱՌՆԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԲԱԶՄԱԿԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ
ՆԱԽԱԳԾԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹ
ՄՈԴՈՒԼ S.500մ²



<ապր: ք., Երեվան, Դավիթ Անհաղթի փող. 23
<տ: + 374 10 241642, + 374 10 241676
Ֆաքս: + 374 10 241191
E-mail: transproject@mail.ru
Web: www.transproject.info

Հունքի սառնարանային պահպանում

Նախաբան

Բնական ցրտի օգտագործումը մարդկությունը կիրառում է անհիշելի ժամանակներից: Գյուղատնտեսության և արդյունաբերության զարգացմանը զուգահեռ ցրտի պահանջարկը գնալով մեծացավ: Սկզբնապես սկսվեց ձմռան ամիսներին բնական ցրտի կիրառմամբ սառցի արտադրությունը՝ հետագա օգտագործման համար և սառցապահեստներում (նկուղներում) պահպանման համար:

Ժամանակակից սառնարանային տեխնիկայի առաջընթացը պայմանավորված է տարբեր դարաշրջանների և ազգությունների մեծանուն գիտնականներ Գ. Ամատունի, Բեկսնի, Յա. Ժերկինսի, Խ. Տելեի, Ս. Կառնոյի, Վ. Կելվինի, Ռ. Կլաուզիուսի, Ս. Նարադեյի և այլոց կատարած գիտապրակտիկ աշխատանքներով ու հայտնագործություններով:

Առաջին սառնարանային մեքենաները ի հայտ են եկել 19-րդ դարի կեսերին: Աբսորբցիոն սառնարանային մեքենայի հայտնագործումը և կառուցվածքային ձևակերպումը կապված է Ջ. Լեսլիի (Մեծ Բրիտանիա, 1810թ.), Ֆ. Կառեի (Ֆրանսիա, 1850թ.) և Ֆ. Վինդհաուզենի (Գերմանիա, 1878թ.) անունների հետ: Եթերով աշխատող առաջին շոգեկոմպրեսիոն մեքենայի հեղինակը Ջ. Ժետկինսն էր (Մեծ Բրիտանիա, 1834): Ավելի ուշ ստեղծվեցին նման մեքենաներ, որոնցում որպես ցրտազրակ օգտագործվեցին մեթիլեթերը և ծծմբային անհիդրիդը: 1874թ-ին Կ. Լինդեն (Գերմանիա) կառուցել է ամոնիակային շոգեկոմպրեսիոն սառնարանային մեքենան, որով և սկիզբ դրվեց սառնարանային մեքենաշինությանը:

Հնարավոր է պնդել, որ քաղաքակրթության զարգացման ընթացքի վրա մեծ ազդեցություն է թողել և թողնում արհեստական ցրտի կիրառումը, որը կենցաղային առաջադիմության ամենակարևոր օղակներից է:

Բնակչությանը անհրաժեշտ է ապահովել բուսական և կենդանական ծագման բարձրարժեք մթերքներով, ոչ միայն արտադրության և բերքահավաքի, այլև ուշ աշնան, ձմռան և վաղ գարնան ժամանակահատվածներում:

Համաշխարհային առողջապահական հրահանգների համաձայն, միջին գոտիներում (որտեղ գտնվում է Հայաստանը) պահպանման դրված բուսական հումքը ըստ ամիսների պետք է բաշխվի հետևյալ կերպ. նոյեմբեր-դեկտեմբեր՝ 15%, հունվար-ապրիլ՝ 75% և մայիս-հունիս՝ 10%: Խնդիր, որը հնարավոր է լուծել բուսական հումքի մի մասի տևական պահպանմամբ:

Բուսական հումքի բնական ցրտի կիրառմամբ պահպանման եղանակները Հայաստանում կիրառվել են անհիշելի ժամանակներից և կիրառվում են մինչ այժմ,

իսկ սառնարանային պահպանման տեխնոլոգիական հարցերը սկսել են ուսումնասիրել 1960-ական թվականներից: ԽՍՀՄ վերջին տարիներին ՀՀ Պետագրոարդի և Հայկոպի համակարգում գործում էին 50-ից ավելի, հիմնականում բուսական հումքի պահպանման սառնարանային տնտեսություններ, որոնց մի մասը առանձին կազմակերպություններ էին, իսկ մի մասը՝ կոլեկտիվ և խորհրդային տնտեսություններին կից կառույցներ: Հումքի կարճատև և տևական պահպանման խորը սառեցման խցեր ունեին նաև 10-ից ավելի սննդարդյունաբերական գործարաններ: Մինչև 1990-ական թվականները Հայաստանում գործող նշված սառնարանային տնտեսություններից յուրաքանչյուրի տարողությունը գերազանցում էր 5000 տոննան, իսկ Երևանի բանջարեղենային բազայի և սառցակոմբինատի տարողությունները գերազանցում էին 40 հազար տոննան: Նշվածներից բացի գործում էին և նրանց մեծ մասը ներկայումս շարունակում են գործել փոքր՝ մինչև 20 տոննա տարողությամբ սառնարանային պահեստներ:

Սառնարանային տնտեսություններում, կախված բուսական հումքի տեսակից հիմնականում օգտագործվել են 25 և 35 կգ տարողությամբ բեռնարկղեր և խաղողի պահպանման համար՝ մինչև 10 կգ տարողությամբ արկղեր:

Մինչ օրս թարմ բուսական հումքի սառնարանային պահպանման պահեստների ընդհանրացված դասակարգում գոյություն չունի: Սովորաբար պտղապահեստները դասակարգվում են 2 մեծ խմբի՝ արհեստական ցրտի օգտագործմամբ և առանց արհեստական ցրտի աշխատող պահեստներ, որոնք են նկուղները, մառանները, ինչպես նաև բանջարեղենի պահպանման լայնակույտերը և խրամատները:

Արհեստական ցրտի կիրառմամբ աշխատող պտղապահեստներն իրենց հերթին բաժանվում են 2 խոշոր խմբերի՝ սովորական մթնոլորտ ունեցող խցեր և կարգավորվող գազային միջավայր ունեցող սառնարանային խցեր: Նշվածը վերաբերում է այն սառնարանային խցերին, որտեղ ջերմաստիճանը պահպանվում է մինչև տվյալ հումքի կրիոսկոպիկ ջերմաստիճանային սահմաններ: Խորը սառեցման խցերում ջերմաստիճանը պահպանվում է -16 -ից -20°C -ի սահմաններում:

Բնական ցրտի օգտագործմամբ պահեստարաններ

ՀՀ պայմաններում բուսական հումքի տևական պահպանման կիրառվող արդյունավետ եղանակներից է մինչ օրս նշանակությունը չկորցրած մառաններում պահպանումը: Մառաններում բանջարեղենով լցված պարկերը կամ զամբյուղները դրվում են մառանի հատակին, փայտյա հարթակի վրա, իսկ մրգերը զամբյուղներով կամ արկղերով շարվում դարսակներով: Խաղողը առավել հաճախ պահպանվում է կախված վիճակում: Արմատապտուղները, պալարապտուղները և կաղամբը

պահպանվում են լայնակույտերում և խրամատներում: Լայնակույտերը պատրաստվում են գետնի մակերեսին կամ փոքր խորությամբ, ունենում են օդափոխման համակարգ, ջերմամեկուսիչ և խոնավամեկուսիչ շերտ, հալոցքային և անձրևային ջրերի հեռացման առվակներ: Լայնակույտի կենտրոնում փորվում է 30 սմ լայնությամբ և նույնքան խորությամբ առվակ, որը ծածկվում է փայտյա ձողերով: Առվակի 2 ծայրերում օդի ներհոսքի համար տեղադրվում է մեկական խողովակ: Օդի արտահոսքն ապահովելու համար 3-4 մետրի վրա տեղադրվում է արտահոսքի 20X20սմ չափերի փայտյա խողովակ: Խողովակների այն մասի վրա, որը գտնվում է հունքի զանգվածում, 5 սմ հեռավորությամբ խողովակի տարբեր կողմերում բացվում է 5-7մմ տրամագծով անցքեր: Լայնակույտը բարձելուց հետո, կույտի գագաթին, երբեմն նաև լանջերին, դրվում է տախտակյա ցանց կամ փայտյա ձողեր, ծածկվում հարդի ապա հողի շերտով:

Հողի շերտի հաստությունը կարգավորվում է այն հաշվով, որ ապահովվի անձրևաջրերի հեռացումը: Եղանակների ցրտելուց մի քանի օր հետո հողի շերտը հաստացվում է: Խրամատային պահպանումը լայնակույտայինից տարբերվում է միայն խրամատի խորությամբ և երկարուկ ձևով: Թե լայնակույտերում և թե խրամատներում հունքը ներքևից սկսած ծածկվում է հարդի խրճերով, ապա հողի շերտով:

Ուժեղ ցրտերի ժամանակ, ցրտահարությունից խուսափելու համար, օդի ներհոսքի և արտահոսքի խողովակները փակվում են: Հարդի այնուհետև հողի շերտերի հաստությունները կարգավորվում են ըստ տարվա ժամանակի և հունքատեսակի: Առավել վաղ ծածկելու և հաստ շերտի պարագայում հունքը կարող է գերտաքանալ, արդյունքում շնչառությունը կինտենսիվանա, ջերմաստիճանը ավելի կբարձրանա, կառաջանա ածխաթթու գազի ավելցուկ, թթվածնի պակաս, ինչի հետևանքով պտուղներում կընթանա ինտրամոլեկուլյար շնչառություն և պտուղները կխեղդվեն: Ծածկույթի բարակ շերտի դեպքում հունքը կարող է ցրտահարվել:

ՀՀ պայմաններում լայնակույտերի և խրամատների հարդի և հողի շերտերը ըստ հունքատեսակների պետք է ունենան հետևյալ հաստությունները.

արմատապտուղների և կարտոֆիլի համար - հարդի շերտը կատարային մասում՝ 20-30սմ, հիմքի մասում՝ 30-40սմ, հողի շերտը կատարային մասում՝ 30-50սմ, հիմքի մասում՝ 50-60սմ,

կաղամբի համար - հարդի շերտը կատարային մասում՝ 10-20սմ, հիմքի մասում՝ 20-40սմ, հողի շերտը կատարային մասում՝ 30-40սմ, հիմքի մասում՝ 50-60սմ:

Մանրէաբանական հիվանդություններից խուսափելու համար անհրաժեշտ է յուրաքանչյուր տարի լայնակույտերի և խրամատների տեղը փոխել, իսկ եթե օգտագործվելու է հին տեղը, ապա անհրաժեշտ է այն կանխավ ախտահանել: Առավել

առաջադիմական է մշտական լայնակույտային փայտյա հարթակի կիրառումը: Դրանց առավելությունը կայանում է նրանում, որ քամհարների օգնությամբ հնարավոր է դառնում իրականացնել արհեստական օդափոխում:

Լայնակույտերում և խրամատներում ջերմաստիճանային տատանումները վերահսկվում են այդ նպատակով հումքի զանգված մտցրած խողովակների ելքում ջերմաչափեր տեղադրելով և ջերմաստիճանները գրանցելով: Ջերմությունը պահպանվող հումքում կարգավորվում է ներհոսքի և արտահոսքի խողովակների մասնակի կամ ամբողջությամբ փակել-բացելով:

Բնական ցրտի կիրառումով պահպանման առավել նպատակահարմար տարբերակ է հիմնական պահեստների կիրառումը: Դրանք ջերմամեկուսացում և բնական կամ արհեստական օդափոխում ունեցող շինություններ են: Հիմնական պահեստների ծավալը կարող է տատանվել մի քանի տասնյակից մինչև մի քանի հազար մ³: Շինությունները լինում են ամբողջապես վերերկրյա և ամբողջապես կամ մասնակի ստորգետնյա: Վերերկրյա պահեստները հարմար են փոքր հարաբերական խոնավություն պահանջող հումքատեսակների՝ սոխ, սխտոր, մյուսները՝ կարտոֆիլի, գազարի, կաղամբի պահպանման համար: Անկախ պահեստի տեսակից հուսալի օդափոխանակությունը պարտադիր է: Այս տիպի պահեստներում հատակը կամ ցանցային է (կեղծ հատակ) կամ ունի օդաբաշխիչ խողովակներ: Ակտիվ օդափոխմամբ պահեստներում պահպանման ընթացքը բաժանվում է 3 փուլի՝ հումքի ցամաքեցում(չորացում), հովացում և պահպանում: Առաջին փուլում ջերմաստիճանը միջինը կազմում է 7-13⁰C, հովացման փուլում ջերմաստիճանը իջեցվում է մինչև 0⁰C, պահպանման փուլում աշխատանքներ են տարվում ջերմաստիճանային տատանումները նվազագույնի հասցնելու ուղղությամբ:

Չորացման փուլը, որի տևողությունը 2-3 օր է, այն ժամանակահատվածն է, երբ ակտիվ օդափոխությամբ հումքի մակերեսից հեռացվում է խոնավությունը: Հովացման փուլի տևողությունը կախված է տվյալ ժամանակահատվածում օդի ջերմաստիճանից և կազմում է 3-15 օր: Այդ ընթացքում հարմար է օդափոխումն իրականացնել գիշերը և վաղ առավոտյան: Տևական պահպանման դեպքում օդափոխում պետք է իրականացնել օրեկան 4-6 անգամ 25-30 րոպե տևողությամբ:

Բնական ցրտի կիրառմամբ հումքի և մթերքների պահպանման հնագույն եղանակներից է նաև պահպանումը սառույցի օգտագործմամբ: Եղանակը կիրառվում է հատուկ այդ նպատակի համար կառուցված խցերում, որոնք կազմված են լինում պահեստարանից և հարակից սառնարանային խցից: Խնդիրը լուծվում է սառցախուցը պահեստախցի որևէ մի պատի վերևում կամ առաստաղի տակ տեղադրելով: Այլ տարբերակ է առաստաղի վրա տեղադրելու եղանակը, որը պահանջում է կամ կեղծ առաստաղ կամ լավ ջերմահաղորդականություն ունեցող

առաստաղ և սառույցի վերին մեկուսիչ շերտ: Առավել կատարելագործված տարբերակ է վերևից և ներքևից բացվածք ունեցող պատով պահեստախցի և սառցախցի անջրպետման եղանակը: Առավել ցածր ջերմաստիճաններ ստանալու համար, հաճախ սառույցին աղ է ավելացվում, ինչը հնարավոր է դարձնում բացասական ջերմաստիճանների ստացումը:

Սառնարանային պահպանման դասակարգում

Սառնարանային պահպանումը բաժանվում է 3 խմբի՝ կարճատև պահպանում, տևական պահպանում, ցածր ջերմաստիճանային պահպանում: Կարճատև և տևական պահպանման համար հումքը կամ մթերքը հովացվում և պահպանվում է նրանում սառցագոյացման ջերմաստիճանից բարձր ջերմաստիճաններում: Իսկ ցածր ջերմաստիճանային պահպանում իրականացնելիս, հումքը կամ մթերքը սառցվում է և պահպանվում $-12\dots-23^{\circ}\text{C}$ -ի սահմաններում, առավել հաճախ -18°C -ում:

Դրական ջերմաստիճաններում կամ մինչև -3°C -ում պահպանումը անվանվում է նաև պահպանում հովացած վիճակով, կամ պահպանում չափավոր ցրտի կիրառմամբ:

Ջերմաստիճանի իջեցմանը զուգահեռ հումքի շնչառության ինտենսիվությունը կտրուկ անկում է ապրում, հումքի պահպանման տևողությունը երկարում: Հովացրած վիճակով բուսական հումքի պահպանումը հնարավորություն է ստեղծում հումքը տևականորեն պահպանել բնական հատկությունների չնչին շեղումներով:

Սառեցրած բուսական հումքը կամ մթերքները կարելի է պահպանել անհամեմատ տևական ժամանակահատվածներում: Ինչը բացատրվում է՝ որ մթերքում հեղուկների մեծ մասը վեր է ածվում սառույցի բյուրեղների և մանրեները դրանցով սնվել չեն կարող: Մնացած հեղուկի խտությունը այնքան է բարձրանում, որ մանրեները ենթարկվում են պլազմոլիզի, դադարում կենսագործել: Սառեցման պրոցեսը անհրաժեշտ է կատարել հնարավորինս արագ, որպեսզի հումքը չցրտահարվի: Այդ նպատակով կիրառվում է արագ սառեցնող ապարատներ: Ցանկալի է սառեցումը տանել ինտենսիվ **քամհարմամբ** -30 և ցածր ջերմաստիճաններում: Սառեցրած հումքի և մթերքների պահպանումն իրականացվում է $-18\dots-20^{\circ}\text{C}$ -ի սառնարանային խցերում:

Պահպանման պայմաններ: Կարճատև և տևական պահպանման լավագույն պայմանները յուրաքանչյուր հումքատեսակի համար տարբեր են և հաճախ որոշվում են փորձնական ճանապարհով:

Պահպանման ջերմաստիճան: Չնչին բացառություններից զատ հումքի և մթերքների համար պահպանման լավագույն ջերմաստիճանը ընտրվում է դրանցում

սառցագոյացման ջերմաստիճանից 3°C բարձր ջերմաստիճան: Որոշ մրգեր և բանջարեղեններ շատ զգայուն են ջերմաստիճանային տատանումների նկատմամբ և յուրաքանչյուր հումքատեսակի համար սահմանված ջերմաստիճանի պահպանումը պարտադիր է:

խոնավություն և օդի շրջապտույտ: Բոլոր շուտ փչացող հումքատեսակները և մթերքները, առանց փաթեթավորման պահպանելիս, պահանջում են ոչ միայն ջերմաստիճանի այլ նաև օդի որոշակի խոնավություն և շրջապտույտ: Հումքի և մթերքների որակի վատթարացումը, հաճախ պայմանավորված է դրանց ջրազրկմամբ, որն ուղեկցվում է հումքի թառամեցմամբ: Ջրազրկումը տեղի է ունենում այն դեպքերում երբ հումքում կամ մթերքներում ջրային գոլորշիների ճնշումը բարձր է շրջապատի ջրային գոլորշիների ճնշումից: Ջրազրկմանը նպաստում է նաև օդի ինտենսիվ հարկադրական կամ բնական կոնվեկցիան:

Օդի հարաբերական խոնավության մեծ լինելու պարագայում ինտենսիվորեն գործում են բորբոսասնկերը և բակտերիաները: Օդի խոնավությունը և շրջապտույտի ինտենսիվությունը գործում ազդեցություն չեն թողնում եթե հումքը կամ մթերքը պահպանվում են գոլորշու համար անթափանց փաթեթավորմամբ:

Խառը պահպանում: Պահպանման լավագույն պայմաններ ապահովելու համար շատ հումքատեսակներ և մթերքներ նախընտրելի է պահպանել առանձին: Եթե հարկ կա, որ երկու և ավելի տեսակի հումք կամ մթերքների համատեղ պահպանման, ապա ընտրվում է, այն հումքի կամ մթերքի պահպանման ջերմաստիճանը, որը ամենաբարձրն է:

Խառը պահպանման դեպքում հաշվի է առնվում, տարբեր հումքատեսակների համատեղելիությունը, բացառելով օտար հոտերի կլանումը:

Հումքի հովացում: Հումքը մինչև սառնարանային խուց տեղադրելը իրականացվում է հովացում: Բերքահավաքից հետո հումքի ջերմաստիճանը հավասար է լինում շրջակա միջավայրի ջերմաստիճանին և որպեսզի դադարեցվի հումքի կենսական պրոցեսների ընթացքը, սառնարանային խուց տեղադրելիս խցի ջերմային ռեժիմը չխախտվի իրականացվում է հումքի նախնական հովացում: Նախնական հովացումը անհրաժեշտ է տանել հնարավորինս արագ, որը ազդում է պահպանվող մթերքի վերջնական որակի վրա: Հումքի մինչև նախնական խուց տեղադրելը, խցի ջերմաստիճանը իջեցվում է մինչև պահպանման ջերմաստիճանին հավասար: Հումքը հովացման խուց տեղադրելիս սկզբնական փուլում հումքի և խցի ջերմաստիճանային և գոլորշու ճնշման տարբերությունները ունենում են նշանակալի արժեք և հումքը արագորեն հովանում է, ջուր կորցնում, խցի ջերմաստիճանը

բարձրանում: Հովացման վերջնական փուլում խցում ջերմաստիճանը իջնում է մինչև վերջնական մեծություն:

Շատ կարևոր է սառնարանային տեղակայանքը ունենա այնպիսի հզորություն, որ հնարավոր չդառնա խցի ջերմաստիճանի ավելորդ բարձրացումը և հումքը հնարավորինս արագ հովանա:

Սառնարանային տեղակայանքի ջերմային ծանրաբեռնվածություն

Սառնարանային մեքենայի ծանրաբեռնվածությունը բաժանվում է չորս տարբեր աղբյուրներից հաղորդվող ջերմային հոսքերը չեզոքացնող մասերի:

Ջերմային հոսքեր պատերի միջով շրջակա միջավայրից, օդափոխանակությունից, հումքից և տարբեր լրացուցիչ աղբյուրներից:

Ջերմային հոսքեր պատերից - դա ջերմահոսքեր են որ տեղի է ունենում ջերմաստիճանային տարբերությունների հետևանքով, ջերմահաղորդման շնորհիվ: Բնության մեջ բացարձակ մեկուսացում գոյություն չունի և երբ շինությունում ջերմաստիճանը ցածր է միջավայրի ջերմաստիճանից մշտապես տեղի է ունենում ջերմահաղորդում միջավայրից դեպի շինություն:

Ջերմային հոսքեր օդափոխանակությունից – տեղի է ունենում սառնարանային խցերի դռների բացել փակելուց երբ արտաքին միջավայրից օդը թափանցելով խուց, առավել սառը և խիտ օդը խցից դուրս է մղվում: Ջերմաքանակը, որը անհրաժեշտ է խլել թափանցած տաք օդի ջերմաստիճանը և խոնավապարունակությունը իջեցնելու և խցի հաշվարկային պարամետրերին հավասարեցնելու համար, կազմում է ընդհանուր ջերմային ծանրաբեռնվածության մաս:

Ջերմային հոսքեր հումքից - դա ջերմային ծանրաբեռնվածություն է, որը պահանջվում է հումքի ջերմաստիճանը սահմանվածին հասցնելու և կենսական պրոցեսների հետևանքով անջատված ջերմության քանակները չեզոքացնելու համար: Խորը սառեցման խցերում, որտեղ պահպանման ջերմաստիճանը – 18⁰C է, հաճախ արագ սառեցնող ապարատներից հումքը կամ մթերքը խուց է տեղափոխվում ավելի ցածր ջերմաստիճաններում: Նման դեպքերում սառնարանային մեքենայի ծանրաբեռնվածությունը պակասում է: Սառնարանային խցերում ջերմաստիճանային պարամետրերը կայունանալուց հետո հումքի հովացման ջերմային ծանրաբեռնվածության պահանջարկը վերանում է:

Ջերմային հոսքերի լրացուցիչ աղբյուրներ - ջերմային տարբեր աղբյուրներից առաջացող ծանրաբեռնվածությունը, անվանվում է լրացուցիչ

ծանրաբեռնվածություն: Լրացուցիչ ջերմային ծանրաբեռնվածության աղբյուր են՝ սառնարանային խցերում աշխատող մարդիկ, լուսաստվածությունը, քամհարների և այլ տեխնոլոգիական սարքերի շարժիչները:

Աղյուսակ 1

Սառնարանային պատերի ջերմոտեխնիկական բնութագրեր

| Կառուցվածք | Նյութ | Ջերմահաղորդականություն Վտ/մ.Կ. | Ջերմահաղորդման գործակից Վտ/(մ ² Կ) |
|---------------|---|-----------------------------------|--|
| Շարվածք | Քար և աղյուս | 0.72 | |
| | Գիպսոբետոն | 0.72 | |
| | Բետոնային բլոկներ ըստ հաստության | | |
| | 100մմ. ավազային լիցքով | | 7.95 |
| | 200մմ. ավազային լիցքով | | 5.11 |
| | 300մմ. ավազային լիցքով | | 4.43 |
| | 100մմ. փրփրավազային (ՔսՈՍ) լիցքով | | 5.11 |
| | 200մմ. ավազային լիցքով | | 3.29 |
| | 300մմ. ավազային լիցքով | | 3.01 |
| Փայտյա | Ամուր բնափայտով փշատերև | 0.16 | |
| | Նրբատախտակ 13մմ (фанера) | 0.12 | 9.09 |
| | Նրբատախտակ 19մմ | | 6.08 |
| Ծածկանյութ | Տոլ | | 36.91 |
| | Պատրաստի ծածկանյութ 9մմ | | 17.03 |
| Մեկուսիչ | Ապակեբամբակ | 0.039 | |
| | Փրփրապոլիուրետան (հարթ) | 0.029 | |
| | Լցնովի նյութեր՝ փայտի տաշեղներ, սղոցաթեփ, հանքային բամբակ, փրփրավազ | 0.065 | |
| | | 0.039 | |
| Օդային թաղանթ | Անշարժ | | 9.37 |

| | | | |
|-------------|-----------------------|--|-------|
| | շարժվող – 3,35 մ/վրկ. | | 22.70 |
| | շարժվող – 6,7 մ/վրկ. | | 34.10 |
| Ապակեպատում | Միատակ | | 6.42 |
| | Երկտակ | | 2.61 |
| | Եռատակ | | 1.65 |
| | Քառատակ | | 1.19 |

Ջերմային հոսքեր 0⁰ C-ից ցածր ջերմաստիճանային խուց արտաքին օդից

| Պահպանման խցի ջերմաստիճանը 0 ⁰ C | Ներթափանցող օդի ջերմաստիճանը 0 ⁰ C | | | | | | | | | |
|--|---|--------|--------|--------|--------|--------|--------|--------|--------|--------|
| | 5 | | 10 | | 25 | | 30 | | 35 | |
| | Ներթափանցող օդի հարաբերական խոնավություն, % | | | | | | | | | |
| | 70 | 80 | 70 | 80 | 50 | 60 | 50 | 60 | 50 | 60 |
| 0 | 0,0092 | 0,0111 | 0,0142 | 0,0154 | 0,0505 | 0,0562 | 0,0650 | 0,0724 | 0,0820 | 0,0921 |
| -5 | 0,0193 | 0,0210 | 0,0235 | 0,0247 | 0,0592 | 0,0649 | 0,0736 | 0,0809 | 0,0903 | 0,1004 |
| -10 | 0,0271 | 0,0288 | 0,0309 | 0,0321 | 0,0662 | 0,0719 | 0,0805 | 0,0877 | 0,0970 | 0,1071 |
| -15 | 0,0350 | 0,0367 | 0,0383 | 0,0395 | 0,0732 | 0,0788 | 0,0873 | 0,0945 | 0,1037 | 0,1137 |
| -20 | 0,0427 | 0,0444 | 0,0456 | 0,0468 | 0,0857 | 0,0857 | 0,0941 | 0,1013 | 0,1102 | 0,1203 |
| -25 | 0,0501 | 0,0523 | 0,0525 | 0,0537 | 0,0866 | 0,0922 | 0,0998 | 0,1077 | 0,1165 | 0,1265 |

Սառնարանային խուց ներթափանցող օդի քանակությունը դռները բացելիս L/վրկ.

| Խցի ծավալը մ ³ | Ջերմաստիճանը խցում | |
|---------------------------|--------------------|-------------|
| | 0°C-ից բարձր | 0°C-ից ցածր |
| 7 | 3.1 | 2.3 |
| 8.5 | 3.4 | 2.6 |
| 10 | 3.7 | 2.8 |
| 15 | 4.4 | 3.3 |
| 20 | 5.0 | 3.8 |
| 25 | 5.5 | 4.2 |
| 30 | 5.9 | 4.6 |
| 40 | 5.8 | 5.4 |
| 50 | 7.5 | 5.8 |
| 75 | 9.0 | 6.9 |
| 100 | 10.2 | 7.9 |
| 200 | 13.9 | 10.9 |
| 300 | 16.7 | 12.9 |
| 500 | 21.4 | 16.8 |

Բուսական հումքի պահպանման հաշվարկային տվյալներ

| Հումք | պահպանում, պրոցես | Շինության հաշվարկային պայմաններ | | | | առաջարկվող շորացուն պայմաններում Գ/կգ | Պահպանման առավելագույն դյուրություն տևողություն | Հովացում | | | | խոնավապարունակություն % | սառցագոյացման ջերմաստիճան, 0°C | Օդի շրջապատույթի առավելագույն արագություն, մ/վրկ. |
|---------------|----------------------|---------------------------------|-----------------------|-------------------------------|-----------------------|---|--|-------------------------------|-----------|-------------------|---------------------|-------------------------|--------------------------------------|---|
| | | Ջերմաստիճան 0°C | | Հարաբերական խոնավություն % | | | | Հումքի ջերմաստիճանը 0°C | | տևողությունը, ժամ | արագության գործակից | | | |
| | | առաջարկվող | թույլատրելի սահման | առաջարկվող | թույլատրելի սահման | | | սկզբնական | վերջնական | | | | | |
| Ծնեբեկ | կարճատև | 4.5 | 4.5-7.25 | 90 | 85-90 | 4.68 | 30 օր | 15.5 | 1.0 | 24 | 0.90 | 94.0 | -1.25 | 0.45 |
| | տևական | 0.0 | 0-2.25 | 90 | 85-90 | 3.38 | | | | | | | | |
| | հովաց. սկիզբ | 4.5 | | 85 | | 4.42 | | | | | | | | |
| | հովաց. վերջ | 0.5 | | 85 | | 3.31 | | | | | | | | |
| Կանաչ լոբի | կարճատև | 4.5 | 4.5-7.25 | 90 | 85-90 | 4.68 | 30 օր | 26.5 | 1.75 | 20 | 0.67 | 83.0 | -1.25 | 0.45 |
| | տևական | 0.5 | 0-4.5 | 90 | 85-90 | 3.51 | | | | | | | | |
| | հով. սկիզբ | 4.5 | | 85 | | 4.42 | | | | | | | | |
| | հով. վերջ | 0.5 | | 85 | | 3.31 | | | | | | | | |
| Ճակըն- դեղ | կարճատև | 4.5 | 4.5-7.25 | 90 | 85-90 | 4.68 | 3 ամիս | | | | | 90.0 | -2.75 | 0.45 |
| | տևական | 0 | 0-2.25 | 95 | 95-98 | 3.57 | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | | |
|-------------|-------------|------|------------|----|-------|-------|--------------|-------|-----|-----|------|------|-------|------|
| Կաղամբ | կարճատև | 1.75 | 1.75-4.5 | 95 | 90-95 | 4.02 | 4 ամիս | 21.0 | 1.0 | 1.0 | 0.80 | 94.5 | -0.5 | 0.45 |
| | տևական | 0 | 0-2.25 | 95 | 90-95 | 3.57 | | | | | | | | 0.30 |
| | հով. սկիզբ | 4.5 | | 90 | | 4.68 | | | | | | | | 0.75 |
| | հով. վերջ | 0.5 | | 90 | | 3.38 | | | | | | | | 0.30 |
| Գազար | կարճատև | 4.5 | 4.5-7.25 | 90 | 85-90 | 4.68 | 5 ամիս | 21.0 | | | | 88.0 | -0.75 | 0.45 |
| | տևական | 0 | 0-2.25 | 90 | 85-98 | 3.57 | | | | | | | | 0.30 |
| Ծաղկակաղամբ | կարճատև | 1.75 | 1.75-4.5 | 90 | 85-90 | 3.82 | 3 շաբաթ | 21.0 | 1.0 | 24 | 0.80 | 92.5 | -1.0 | 0.45 |
| | տևական | 0 | 0-2.25 | 90 | 85-90 | 3.38 | | | | | | | | 0.30 |
| | հով. սկիզբ | 4.5 | | 90 | | 4.68 | | | | | | | | 0.75 |
| | հով. վերջ | 0 | | 90 | | 3.38 | | | | | | | | 0.30 |
| Վարունգ | կարճատև | 10 | 10-15.6 | 85 | 80-85 | 6.45 | 14 օր | 24.0 | 1.0 | 24 | 1.0 | 95.5 | -0.75 | 0.45 |
| | տևական | 7.25 | 7.25-10 | 85 | 80-85 | 5.35 | | | | | | | | 0.45 |
| | հով. սկիզբ | 15 | | 80 | | 8.81 | | | | | | | | 1.25 |
| | հով. վերջ | 10 | | 80 | | 6.08 | | | | | | | | 0.75 |
| Սոխ | կարճատև | 10 | 10-15.5 | 75 | 70-75 | 5.71 | 8 ամիս | 21.0 | 1.0 | 24 | 0.30 | 89.0 | -1.0 | 0.75 |
| | տևական | 0 | 0-2.25 | 75 | 70-75 | 2.82 | | | | | | | | 0.75 |
| | հով. սկիզբ | 4.5 | | 75 | | 3.92 | | | | | | | | 1.25 |
| | հով. վերջ | 0 | | 75 | | 2.82 | | | | | | | | 0.75 |
| Կարտոֆիլ | կարճատև | 12.7 | 12.75-15.5 | 85 | 80-85 | 7.78 | 7 ամիս | | | | | 78.0 | -2.0 | 0.75 |
| | տևական | 5 | 2.0-5.0 | 85 | 80-85 | 7.78 | | | | | | | | 0.75 |
| Տոմատկանաչ | կարճատև | 12.7 | 12.75-15.5 | 85 | 85-90 | 7.78 | 3-5 շաբաթ | 26.75 | 1.0 | 34 | 1.0 | 95.0 | -0.75 | 0.45 |
| | տևական | 5 | 12.75-15.5 | 85 | 85-90 | 7.78 | | | | | | | | 0.30 |
| | հասունացում | 12.7 | 18.25-21.0 | 85 | 85-90 | 11.17 | | | | | | | | 0.45 |

| | | | | | | | | | | | | | | |
|---------------------------|------------|-------|-------------|-------|-------|------|------------|-------|------|----|------|------|-------|------|
| | հով. վերջ | 0 | | 80 | | 3.01 | | | | | | | | 0.45 |
| Սերկկիլ | կարճատև | 1.75 | 1.75-4.5 | 85 | 80-85 | 3.68 | 3 ամիս | 26.75 | 0 | 24 | 0.67 | 85 | -2.25 | 0.30 |
| | տևական | 0 | -0.5-1.0 | 85 | 80-85 | 3.18 | | | | | | | | 0.30 |
| | հով. սկիզբ | 4.5 | | 85 | | 4.42 | | | | | | | | 0.75 |
| | հով. վերջ | 0 | | 85 | | 3.18 | | | | | | | | 0.30 |
| Ընկույզ կեղևով | կարճատև | 4.5 | 4.5-7.25 | 70 | 65-75 | 3.61 | 12 ամիս | - | - | - | - | 2-8 | - | 0.75 |
| | տևական | 0 | 0-4.5 | 70 | 65-75 | 2.65 | | | | | | | | 0.75 |
| Ընկույզ առանց կեղևի | կարճատև | 4.5 | 4.5-7.25 | 70 | 65-75 | 3.61 | 10 ամիս | - | - | - | - | 3-10 | - | 0.75 |
| տևական | 0 | 0-4.5 | 70 | 65-75 | 2.65 | 0.75 | | | | | | | | |
| Չու արկղով | կարճատև | 4.5 | 4.5-7.25 | 85 | 80-85 | 4.42 | 12 ամիս | 7.25 | -1.0 | 10 | 0.85 | 74.2 | -0.25 | 0.45 |
| | տևական | -1.0 | -1.0 - -0.5 | 85 | 85-87 | 2.91 | | | | | | | | 0.30 |
| | հով. սկիզբ | 4.5 | | 85 | | 4.42 | | | | | | | | 0.45 |
| | հով. վերջ | -1.0 | | 85 | | 2.91 | | | | | | | | 0.30 |
| Նուռ | կարճատև | | 7-8 | 90 | 90-95 | 3.55 | 3 ամիս | 21.0 | 2.0 | 24 | 0.80 | 86 | -1.7 | 0.30 |
| | տևական | 7.0 | 5-7 | 90 | 90-95 | 3.20 | | | | | | | | 0.30 |
| | հով. սկիզբ | 5.0 | | | | | | | | | | | | |
| հով. վերջ | | | | | | | | | | | | | | |
| Նարինջ | կարճատև | 4.5 | 4.5-7.25 | 85 | 85-90 | 4.42 | 2.5 | 24.0 | 0 | 22 | 0.70 | 81 | -2.0 | 0.45 |

| | | | | | | | | | | | | | | |
|------------------|--|------------|---------|----|-------|------|-----------|------|-----|----|------|----|------|------|
| | տևական հով. սկիզբ հով. վերջ | 0 | 0-1.0 | 85 | 85-90 | 3.18 | ամիս | | | | | | | 0.45 |
| Արքայա նարինջ | կարճատև տևական հով. սկիզբ հով. վերջ | 4.0 1.0 | 4.0-7.0 | 85 | 85-90 | 3.61 | 3 ամիս | 21.0 | 1.0 | 24 | 0.80 | 87 | -1.5 | 0.30 |
| | | | 1.0-1.5 | 90 | 85-90 | 2.55 | | | | | | | | 0.30 |

Սառնարանային տնտեսություն

Սառնարանային տնտեսություններն անկախ հզորությունից և ուղղվածությունից պետք է կազմված լինեն գլխավոր, օժանդակ և երկրորդական շինություններից:

1. Գլխավոր շինություններ`
 - սառնարանային խցեր
 - նախնական մշակման տեղամաս
 - վերամշակման տեղամաս
2. Օժանդակ շինություններ
 - սառնարանային տեղակայանքի շինություն
 - կշռակայան
 - տարաների պահեստ
 - ցրտագրակի պահեստ
 - նյութատեխնիկական պահեստ
 - ամբարձիչների կայան:
3. Երկրորդային շինություններ`
 - վարչական շինություն
 - կենցաղային շինություն

Սառնարանային խցերի ջերմամեկուսացում: Սառնարանային խցերի հատակը, պատերը և առաստաղը պետք է ապահովված լինեն ջերմամեկուսացմամբ:

Ջերմամեկուսիչ նյութերին ներկայացվում են հետևյալ պահանջները`

- ունենան ջերմահաղորդման փոքր գործակից
- օժտված լինեն ջերմակլանման թույլ հատկությամբ
- գոլորշաթափանցելի չլինեն
- լինեն թեթև և ամուր
- լինեն հրակայուն և ցրտակայուն
- օժտված լինեն հոտեր կլանելու ունակությամբ
- չփտեն և չվարակվեն բորբոսասնկերով և այլն:

Մեկուսիչ որը կբավարարի նշված բոլոր պահանջներին գոյություն չունի:

Սառնարանային տեխնիկայում և տեխնոլոգիայում օգտագործվող հիմնական մեկուսիչներ են`

1. Փրփրապակի:

Պատրաստվում է ապակու ջարդոնից: Խոնավակլանիչ չէ, չի բորբոսում, հրակայուն է: Օգտագործվում է ստացիոնար սառնարանների մեկուսացման համար:

2. Տորֆ:

Պատրաստվում են սալիկների ձևով, դեռևս լրիվ չքայքայված տորֆից: Լավ ջերմամեկուսիչ են: Հրակայուն չեն, ունեն թույլ ամրություն:

3. Հանքային խցան:

Պատրաստվում է ապակեքամքակից, խողովակների, կիսախողովակների և սալերի ձևով: Օգտագործվում են խողովակների և պատերի մեկուսացման համար:

4. Փրփրաբետոն:

Պատրաստվում է բետոնի շաղախը փրփրեցնող նյութերի հետ խառնելով: Սալերը պատրաստվում են 1x0,5մ. չափերով, հաստությունը $40 \div 60$ մմ: Բավարար ամուր է:

5. Փրփրապլաստ :

Ստացվում է քիմիական սինթեզով, ունի օդով լցված խոռոչային կազմություն: Օժտված է լավ մեկուսիչ հատկությամբ: Առավել հայտնի փրփրապլաստներից է՝ փրփրապոլիստիրոլը, որը օգտագործվում է պատերի, դռների, խողովակների մեկուսացման համար:

6. Կերամզիտային խճաքար:

Ստացվում է թեթև կավի թրծմամբ: Ստացված խոռոչավոր գնդիկները օգտագործվում են հատակների և ծածկերի մեկուսացման համար:

7. Ալֆոլ:

Ալյումինի 0.06մմ հաստությամբ շերտեր են: Մի քանի շերտով ձգվում են փայտյա վանդակի վրա: Օգտագործվում է դրսից մեկուսացման համար:

8. Վառելիքային խարամ:

Օգտագործվում է հատակների հարթեցման և ծածկերի մեկուսացման համար:

9. Բիտում:

Ստացվում է քարածխից, նավթից, փայտից: Գոլորշամեկուսիչ է, օգտագործվում է որպես սոսնձող նյութ:

10. Տոլ, ռուբերոիդ, պերգամին:

Պատրաստվում են սովորաբար թից, ներծծում տաք բիտումային կամ քարածխային խեժով:

Օգտագործվում են պատերի և տանիքի մեկուսացման համար:

Սառնարանային տեխնոլոգիայում և տեխնիկայում ներկայումս մեծ կիրառություն է ստացել ջերմա, գազա և գոլորշամեկուսացված պանելների օգտագործումը: Դրանք շինարարական կիսապատրաստուկներ են, որոնք հավաքվում են տանող իրանի վրա: Անվանվում են սենդվիչ պանելներ: Պանելները իրենցից ներկայացնում են

մետաղական թիթեղներով սալեր, որոնց մեջ տեղավորված է մեկուսիչ նյութը, հիմնականում փրփրապոլիուրետան:

Սառնարանային խցերի արտաքին պատերի, հատակի և ծածկի ջերմամեկուսիչ շերտի հաստությունը հաշվարկելիս, հաշվի է առնվում տեղանքի կլիմայական պայմանները:

Սառնարանային խցերի դռներ

Սառնարանային խցերի աշխատանքի արդյունավետությունը պայմանավորված է նաև դռների կառուցվածքով: Դռները պետք է լինեն ջերմամեկուսացված: Սառնարանային խցերի դռները լինում են մեկ կամ երկփեղկանի: Խցերը շահագործելիս դռների բացելն անխուսափելի է և այդ պատճառով ներհոսքի սահմանափակումը, կապված է նաև աշխատանքային կուլտուրայից:

Առավելություն է տրվում խցերի կախովի (պատի վրայով սահող) դռներին, որոնք բացելիս վակուումային էֆեկտ տեղի չի ունենում:

Առաջավոր տեխնոլոգիաներում կիրառվում է խցերի ավտոմատ համակարգ, որը կրճատում է դռների անհատակի բաց մնալու տևողությունը:

Մեծ տարողության սառնարանային խցերում կիրառվում է կախովի դռների օդային վարագույր, դուռը բացելիս բացվածքի ամբողջ մակերեսով, վերևից կամ կողքերից քամհարվում է ջերմափոխանակիչով անցնող սառը օդ: Օդային վարագույրը դրսից տաք օդի թափանցումը խուց և սառը օդինը խցից դուրս հասցնում է մինիմումի:

Բուսական հումքի պահպանում օզոնի օգտագործմամբ

Օզոնի ախտահանող ունակությունը հիմնված է եռատոմ թթվածնի O_3 հեշտորեն քայքայման, սովորական O_2 և O ատոմային թվածնի առաջացման վրա: Ատոմային թթվածինը ունի ռեակցիոն ակտիվություն, այն հեշտությամբ ռեակցիայի մեջ է մտնում տարբեր միացությունների հետ, այդ թվում հումքի սպիտակուցների հետ: Այդպիսի ռեակցիայի արդյունքում սպիտակուցները բնափոխվում են, դաադրում մնալ որպես կենդանի օրգաններ:

Օզոնի կիրառմամբ հումքի սառնարանային պահպանումը բարդանում է այն հանգամանքով, որ սառնարանային խցերում օզոնի պարունակության, որոշման ճշգրիտ եղանակ չկա: Ինչը անհնար է դարձնում խցերում օզոնի քանակի կարգավորումը:

Օզոնի որոշակի քանակությունը նպաստում է պահունակությանը, բարձր պարունակությանը հանգեցնում բացասական հետևանքների:

Սառնարանային տեխնոլոգիայում ներկայումս օզոնացումը առավելապես կիրառվում է սառնարանային խցերի, բաժանմունքների, տարաների և սարքերի ախտահանման համար:

Պահպանում մասնակի վակումի պայմաններում: Պահպանման այս եղանակը ստացել է հիպոբատիկ (ցածր ճնշում) անվանումը: Եղանակի էությունը այն է, որ պահպանելիս բուսական հումքը այլ գազերի հետ համատեղ խուց է արտանետում նաև էթիլեն: Էթիլենի կուտակումը նպաստում, հումքի կենսական պրոցեսների խթանմանը՝ հասունացմանը: Եթե առաջացած էթիլենը ինչպես և էթիլային սպիրտը, քացախային ալդեհիդը, ֆառնեզենը հեռացվեն, ոչ միայն խցից այլև հումքի միջբջջային տարածքից, ապա հասունացման և դրան ուղեկցող ոչ ցանկալի պրոցեսները կդանդաղեն:

Կախված բուսական հումքի տեսակից, սորտից սառնարանային խցերում էթիլենի պարունակությունը վտանգավոր շեմի է հասնում, որոշակի ժամկետներում: Կնշանակի մթնոլորտային ճնշման իջեցում անհրաժեշտ կլինի ստեղծել պարբերաբար:

Փորձնական աշխատանքները վկայում են, որ մինչև 60 մմ սնդիկի սյան ճնշման պայմաններում ծաղիկների պահպանման տևողությունը երկարում է 2-3 անգամ:

Բուսական հումքի պահպանում իոնացված ճառագայթների օգտագործմամբ: Իոնացված ճառագայթների առավել լայն օգտագործում են գտել, արկղերի, փաթեթավորման նյութերի, սառնարանային տեխնոլոգիայում կիրառվող օժանդակ նյութերի, սարքերի ախտահանման, ինչպես և կարտոֆիլի, սոխի, սխտորի ծլարձակումը կանխելու նպատակներով:

Ատոմային էներգիայի ռադիոակտիվ ճառագայթները բաժանվում են α , β և γ ճառագայթների α և β ճառագայթները ունեն թափանցելու թույլ ունակություն և դրանց ազդեցությունը ճառագայթվող նյութի վրա աննշան է:

Որոշակի դոզայով (ուժ և տևողություն) իոնիզացնող ճառագայթներով կարելի է ճնշել կամ լրիվ ոչնչացնել բոլոր տեսակի մանրէներին:

Տվյալ հիմքով պահածոյման եղանակները կոչվում են **ռադիոլիզացիա** և **ռադապպերտիզացիա**:

Տավարի մսի սառնարանային պահպանման ժամանակ կիրառվում է -700, ոչխարի մսի համար -300, ձկներեղենի -300-500, նարինջ պահպանելիս -430 ռադ.

ռադիոակտիվ ճառագայթներ: Առավել բարձր դոզաներով ռադիոակտիվ ճառագայթների կիրառումը առաջացնում է սննդամթերքների խորը փոփոխություններ, պայմանավորված թունավոր նյութերի առաջացմամբ և օտար համ ու հոտ ձեռք բերելով:

Բուսական հումքի պահպանումը կարգավորող մթնոլորտում: Օդի նորմալ մատուցման ժամանակ, բուսական հումքի կենսագործնությունը ընդանում է նորմալ հունով, հումքը շարունակում է հասունանալ:



Թթվածնային շնչառության ժամանակ շաքարները օքսիդանում են առաջացնելով ածխաթթու գազ (CO_2) և ջուր (H_2O), անջատելով 674 կկալ ջերմություն: Մեկ գրամ մոլ. կլանված թթվածնի չափով անջատվում է CO_2 և քանի որ բոլոր գազերի գրամ մոլերը գրավում են միևնույն ծավալը, կլանված O_2 -ի ծավալը հավասար է լինում անջատված CO_2 -ի ծավալին:

Եթե հումքը պահպանվի հերմետիկ փակ տարողություններում, ապա O_2 -ի քանակը գնալով կպակասի, իսկ CO_2 -ինը կավելանա, O_2 -ի և CO_2 -ի ընդհանուր քանակի մեծությունը միշտ կմնա հաստատուն հավասար 21%-ի:

Եթե օրինակ O_2 –ի քանակը պահպանման տարողությունում հավասարվել է 16%-ի, ապա CO_2 -ինը կստացվի հավասար 5%-ի:

Առավել նպատակահարմար է այնպիսի գազային կազմի ստեղծումը երբ O_2 -ի և CO_2 -ի ընդհանուր քանակը փոքր է լինում 21%-ից, այսպես O_2 -ինը 3-5%, CO_2 -ինը 3-5% և ազոտինը (N_2) 90-94%: Գազային այդպիսի կազմերը անվանվում են սուբնորմալ գազային խառնուրդներ, որոնք հնարավոր չէ ստանալ բնական ճանապարհով:

Այդ նպատակով պահամանները միացվում են հատուկ ապարատների (սկրուբեր): Պահամաններում O_2 -ով աղքատացած և CO_2 -ով հարստացած օդը մղվում է սկրուբեր, որտեղ CO_2 -ը կլանվում է կլանիչների կողմից և օդը նորից վերադառնում է պահաման: Որպես կլանիչ նյութ հիմնականում օգտագործվում է **կաուստիկ** սոդա և կրի ջրային լուծույթ, որոնք կլանելով CO_2 -ը առաջացնում են նատրիումի և կալիումի բիկարբոնատներ:



Սուբնորմալ գազային խառնուրդներ հնարավոր է ստանալ նաև արտաքին աղբյուրից գազ մղելով:

Սուբնորմալ խառնուրդներում շնչառական պրոցեսների արգելակում բերում է ոչ միայն CO_2 -ը, այլև O_2 -ի փոքր պարունակությունը:

Գոյություն ունի կարգավորվող մթնոլորտում հումքի պահպանման ևս մի եղանակ, դա պահպանումն է ընտրողական թափանցելիություն ունեցող թաղանթային պարկերով:

Քանի որ պոլիէթիլենային թաղանթները մինման թափանցիկ չեն բոլոր գազերի համար, այսպես դրանք հեշտությամբ թողնում են CO₂ -ը և դժվարությամբ O₂-ը:

Շնչառության արդյունքում առաջացած CO₂ -ը դուրս է գալիս պարկից, O₂ -ի քանակը գնալով պակասում: Պարկում ստեղծվում է մասնակի վակուում, թաղանթը սեղմվում է պտուղների, ազոտի պարցիալ ճնշումը մեծանում, քանի որ թաղանթը ազոտի համար թափանցելի է, այն պարկից դուրս է գալիս, ստեղծելով ավելի խորը վակուում:

Այդպիսի տարողություններում ստեղծվում է յուրահատուկ միջավայր, որը հայտնի սահմաններում հնարավոր է կարգավորել: Կախված հումքի տեսակից և սորտից, ընտրելով տարբեր ընտրողական հատկություն ունեցող թաղանթներ: Կարգավորվող մթնոլորտում պահպանումը զուգակցվում է չափավոր ցրտի կիրառմամբ:

Ուլտրամանուշակագույն ճառագայթման կիրառումը սառնարանային տեխնոլոգիայում: Ուլտրամանուշակագույն ճառագայթները տիրապետում են մեծ էներգիայի, ինչի շնորհիվ ունենում ուժեղ քիմիական և կենսաբանական ազդեցություն:

Առավել չափով բակտերիաների վրա ազդում են 2950-2000 A (անգստերմ) երկարության ալիքները:

Ուլտրամանուշակագույն ճառագայթների տվյալ մարզը կոչվում է բակտերիոսպան:

Ուլտրամանուշակագույն ճառագայթների օգտագործումը սննդարդյունաբերությունում սահմանափակվում է դրանց թափանցելու թույլ ունակությամբ (տասնորդական միլիմետրեր):

Այն հիմնականում օգտագործվում է սառնարանային խցերի մանրէազերծման համար, երբեմն նաև տարաների և մսամթերքների արտաքին շերտի մանրազերծման համար:

ԲՈՒՍԱԿԱՆ ՀՈՒՄՔԻ ՀԱՍՈՒՆԱՑՈՒՄԸ

ԵՎ ԲԵՐՔԱՀԱՎԱՔԸ

Բուսական հումքի որակը մեծ չափով որոշվում է հասունացման աստիճանով: Հասունացման ընթացքում տեղի է ունենում հումքի չափերի և զանգվածի մեծացում,

պայմանավորված բջիջների քանակի ավելացմամբ և չափերի մեծացմամբ: Հասունացման ընթացքում ածխաջրերը ենթարկվում են ձևափոխության, տերևներից անցնող շաքարները հումքում առաջացնում են օսլա և այլ կիսաշաքարներ, որը որոշ հումքատեսակներում՝ մասնավորապես ընդեղեններում արտահայտված է, մրգերի մոտ մեծանում է շաքարների պարունակությունը, իսկ օսլայինը՝ փոքրանում է: Հասունացմանը զուգընթաց պակասում է թթվայնությունը, բույրանյութերի և ներկանյութերի քանակները ավելանում են: Քանի որ հումքի համտեսային ցուցանիշները, սննդարժեքը և արտաքին տեսքը կախված են պտուղների զարգացման փուլերից, ամեն առանձին դեպքում կարևորվում է հումքի հասունացման օպտիմալ աստիճանի որոշումը:

Տարբերվում են հումքի հասունացման մի շարք փուլեր.

1. Ֆիզիոլոգիական /կենսաբանական/ հասունացում- երբ հումքի սերմերը կամ կորիզները հասունացած են:
2. Սպառողական հասունացում –երբ հումքը ենթակա է սննդում օգտագործելու:
3. Տեխնիկական հասունացում – երբ հումքը ենթակա է պահպանման կամ վերամշակման:

Տեխնիկական հասունացում հասկացությունը շատ հարբերական է, այն կախված է ոչ միայն հումքատեսակից, այլև օգտագործման նպատակից: Տեխնիկական հասունացումը հաճախ համընկնում է սպառողական, իսկ որոշ հումքատեսակների համար՝ ֆիզիոլոգիական հասունացման հետ: Հումքի հասուն վիճակի գնահատման ամենաբնորոշ հատկանիշներն են՝ չափեր, խտությունը, գույնը, համը, բույրը, կազմությունը և սերմերի հասունությունը: Ցուցանիշներ, որոնց մեծ մասը որոշվում է զգայաորոշման անալիզների միջոցով:

Բուսական հումքի բերքահավաքից հետո դրանցում ընթանում են ֆերմենտատիվ պրոցեսներ, որոնք նպաստում են հասունացմանը: Մառնարանային պահպանման ընթացքում ֆերմենտատիվ պրոցեսները դանդաղում են, հասունացումը հետաձգվում է: Այդ հատկությունները օգտագործվում են, պահպանվում պտուղների սպառումից առաջ, հասունացումը կարգավորելու համար: Բուսական հումքի պահպանման ընթացքը մեծ չափով կախված է բերքահավաքի ժամկետի ճշգրիտ որոշումից: Գործնականում շատ դժվար է բերքահավաքի ոչ միայն

ամենանպաստավոր օրվա՝ այլև նույնիսկ շաբաթվա որոշումը: Ընդ որում, միննույն հումքատեսակի բերքահավաքի ժամկետի ճշգրտորեն կազմված հրահանգ գոյություն չունի: Խնդիրը պայմանավորված է ոչ միայն կոնկրետ վայրի բնակլիմայական պայմաններով, այլև նաև տվյալ տարվա եղանակային պայմաններով:

Բերքահավաքի նպաստավոր ժամկետի առավել ճշտորեն որոշումը՝ չնչին շեղումներով, հնարավոր է վերը շարադրված ցուցանիշները հաշվի առնելով հիմնվել սեփական փորձառության վրա:

Բուսական հումքի պահպանման առանձնահատկություններ

Բուսական հումքի թարմ վիճակում տևական պահպանումը պահանջում է մշակված տեխնոլոգիաների և տեխնոլոգիական ռեժիմների կիրառում: Սակայն դա չի նշանակում, որ նշվածը կայուն ցուցանիշներ են բոլոր ժամանակների համար և փոփոխման ենթակա չեն:

Ելնելով շահագործվող սառնարանային տնտեսության պարամետրերից, պահպանվող հումքատեսակի առանձնահատկություններից և սեփական փորձից տեխնոլոգիական ռեժիմների մեջ հնարավոր է կատարել որոշակի փոփոխություններ, ընդ որում ընդհանուր պահանջները ամպայմանորեն պահպանելու պայմանով:

Ներկայացվող տեխնոլոգիաները այն նվազագույն նպաստավոր պայմաններն են, որոնց պահպանումը ցանկալի է:

Բանջարեղեններ

Կարտոֆիլ: Վաղահաս կարտոֆիլի պտղակեղևը շատ նուրբ է, այն տևական պահպանման ենթակա չէ: Անհրաժեշտության դեպքում, բուժում անցկացնելու պայմանով (պահպանում 15...21 °C 4-5 օր) հնարավոր է վաղահաս կարտոֆիլի պահպանում, մինչև 5 ամիս տևողությամբ: Այդ ընթացքում պալարների վնասված մասերը ծածկվում են խցանային շերտով, որը արգելում է մանրեների ներթափանցումը:

Ուշահաս կարտոֆիլի պալարները ունեն բուժման փուլի կարիք: Պալարների մակերեսի խցանման նյութով (սուբերին) ծածկվելուց հետո, կեղևային մասում կուտակվում են հականեխիչ բնույթի նյութեր: Կարտոֆիլի պահպանման սկզբնական փուլում պահանջվում է առաջացող ջերմությունը հեռացնել օրական 4-5 անգամ 20-30 րոպե տևողությամբ (կույտերի քամհարում):

Բուժման փուլի ավարտից հետո ջերմաստիճանը 15...18°C-ից իջեցվում է մինչև 2...5°C-ի:

Կարտոֆիլի պահպանման հիմնական փուլը շարունակվում է մինչև իրացումը կամ մինչև նոր բերքը:

Ծլարծակման կանխման համար պալարները մշակվում են հիդրիլի 0.5%-ոց ջրային լուծույթով, թուլլատրվում է կիրառել նաև γ - ճառագայթներ:

Գազար, ճակնդեղ: Այդ արմատապտուղները եթե զերծ են վնասվածքներից ապա ունենում են բարձր պահունակություն մինչև 9 ամիս:

Եթե գազարը կամ ճակնդեղը հավաքվում են խոնավ եղանակի և մակերեսը ցեխոտ է լինում, դրանք լվացվում են: Լվանալը մշանակալի չափով հումքի մակերեսից հեռացնում է մանրեները: Լվանալուց հետո թաց հումքով լցված արկղերը ենթարկվում են քամհարման (չորացում):

Թերզարգացած կամ չհասունացած գազարն ու ճակնդեղը պահպանելիս հեշտությամբ թառամում են:

Սոխ, սխտոր: Գլուխ սոխի և սխտորի պահպանման համար կիրառելի են բնական կամ արհեստական ցրտով պահեստները: Պահպանման դնելուց առաջ հումքը 2-3 շաբաթ թողնվում է դաշտում (չոր եղանակին) կամ ամպհովաններում, որպեսզի այն չորանա: Այդ ընթացքում սոխի բնական պակասորդը կազմում է 4-6%:

Չորացման ավարտից հետո հումքը տեղափոխվում է պահեստներ և ջերմաստիճանը աստիճանաբար իջեցվում:

Սոխի և սխտորի պահպանման ամենավտանգավոր խնդիրը ծլարծակումն է, պայքարի միջոցը բերքահավաքից 1 ամիս առաջ դաշտում մալեինաթթվի հիդրազիլի լուծույթով սրսկումը:

Կաղամբ, ծաղկակաղամբ: Ուշահաս կաղամբը հնարավոր է պահպանել 6 ամիս և ավելի: Կաղամբը պահպանվում է սառնարանային խցերում, բնական ցուրտ օգտագործող պահեստներում, լայնակույտերում, խրամատներում: Բոլոր դեպքերում անհրաժեշտ է ծածկող կանաչ թերթերի առկայությունը:

Եթե սառնարանային խցերը բացակայում են, նպատակահարմար է բերքահավաքը ուշացնել, մինչև գիշերային ժամերի ջերմաստիճանը մոտենա 0°C -ին:

Բնական ցրտով պահեստներում արդյունավետ է օդափոխվող բեռնարկղերի օգտագործումը: Կաղամբը պահպանվում է նաև առանձին լայնակույտերով:

Ծաղկակաղամբը օժտված չէ պահունակությամբ (1 ամիս) պահպանման է դրվում ծածկող թերթերով: Ծաղկակաղամբի պահպանման տևողության երկարացման համար, հումքը տարայավորվում է ծածկված (4-5 անցք) պոլիէթիլենային պարկերում, պահպանման տևողությունը մեծանում է մինչև 2 անգամ:

Սեխ: Սեխի հիմնական սորտերը պահունակ չեն՝ մինչև 3 շաբաթ: Ուշ աշնանային սորտերը հնարավոր է պահպանել մի քանի ամիս: Գոմվելուց և փափկելուց խուսափելու համար, բերքահավաքը կատարվում է ոչ լրիվ հասունացման փուլում: Բերքահավաքից հետո պտղի հողի շերտի հետ շփվող մասը շուռ է տրվում վեր և թողնվում դաշտում մի քանի օր: Պահեստներում դարսվում են թարեքների հարդի շերտի վրա:

Մանրեաբանական փչացումից խուսափելու համար հաճախ պտուղները մինչև 1ր. կառուցումը ընկղմվում են 55°C -ի ջրի մեջ:

Սեխի կարգավորվող հասունացում կատարվում է սպառումից առաջ $20\dots25^{\circ}\text{C}$ -ում բնական կամ ավելացվող էթիլենի առկայությամբ:

Չմերուկ: Ցածր ջերմաստիճաններում ձմերուկի միջուկը կորցնում է փխրունությունը, գույնը խամրում է, համը վատանում: $7\dots10^{\circ}\text{C}$ –ում հնարավոր է ձմերուկը պահպանել մինչև 1 ամիս տևողությամբ:

Չմերուկը զգայուն է էթիլենի նկատմամբ և էթիլեն արտադրող պտուղների հետ պահպանում չի կարելի:

Բադրիջան: Բադրիջանի պտուղները զգայուն են ցածր ջերմաստիճանների նկատմամբ: $8\dots10^{\circ}\text{C}$ -ում երկու շաբաթ պահպանելուց հետո, պտուղը գորշանում է, սերմերը կոշտանում: Բադրիջանի պահպանումը պոլիէթիլենային պատկերում նվազեցնում է բնական պակասորդը, սակայն մեծանում մանրեաբանական փչացման վտանգը:

Տաքդեղ: Տաքդեղի թե քաղցր և թե կծու սորտերի տևական պահպանման նախապայման է բերքահավաքից հետո հնարավորինս արագ հովացումը:

Տաքդեղի պտուղների պահպանումը բարակ պոլիէթիլենային թաղանթի պատկերով, պահպանման տևողությունը երկարացնում է մեկ շաբաթով: Էթիլենի առկայությունը նպաստում է տաքդեղի արագ հասունացմանը: Պահպանման առաջարկվող ջերմաստիճանը $^{\circ}\text{C}$:

Տոմատ: Տոմատի պտուղների պահպանման ջերմաստիճանային պայմանները ընտրվում է հասունացմանը համապատասխան: Բաց կանաչ պտուղները պահպանվում են $12\dots15^{\circ}\text{C}$ -ում, հասունացումը կատարվում է $18\dots21^{\circ}\text{C}$ -ում: Բաց կանաչ պտուղների հասունացումը հնարավոր է իրականացնել սեփական արտադրած էթիլենի միջավայրում: Ավելի արագ հասունացման համար պտուղները պահպանվում են 24-48 ժամ տևողությամբ $20\dots25^{\circ}\text{C}$ -ի և 85-90% հարաբերական խոնավության պայմաններում:

Բաց կարմիր գունավորմամբ տոմատի պտուղները պահպանվում են $4\dots10^{\circ}\text{C}$ -ում մինչև 10 օր:

Մրգեր և հատապտուղներ

Խնձոր: Խնձորի վաղահաս սորտերը Հայաստանի պայմաններում պահպանման չեն ենթարկվում: Աշնանային սորտերը ավելի պահունակ են: Տևական պահպանման համար առավել պիտանի են ուշահաս սորտերը, որոնք բերքահավաքը կատարվում է ոչ լրիվ հասունացած վիճակով (բերքահավաքային հասունացում): Պահպանման ընթացքում պտուղները ձեռք են բերում սորտին բնորոշ որակներ՝ համ, բույր, պտղամսի կառուցվածք:

Խնձորի մանրէաբանական փչացում առաջանում է բորբոսասանկերի կենսագործունեությունից, որոնք պտղամիս են թափանցում մեխանիկական վնասվածքների միջով:

Խնձորի դառը բծավորության դեմ կալցիումի քլորիդի լուծույթը և բորբոսասանկերի դեմ ֆունգիցիդային լուծույթները կարելի է օգտագործել համատեղ:

Խնձորի պտուղները պահպանելիս մեծ քանակությամբ էթիլեն են անջատում և համատեղ գազարի, կաղամբի, ծաղիկների պահպանումը ցանկալի չէ:

Խնձորի այն սորտերը, որոնք պահպանման ընթացքում թառամում են, հնարավոր է պահպանել աննշան ջրազրկմամբ պոլիէթիլենային թաղանթ պարկերում:

Տանձ: Տանձի պտուղները պահպանելիս կարևորվում է ջերմաստիճանի հնարավոր արագ իջեցումը: Այդ նպատակով մինչև պտղի սերմնաբնի ջերմաստիճանի սահմանվածին հասնելը կիրառվում է 1...1.5⁰C-ով ավելի սառը օդ, քան տևական պահպանման համար պահանջվող ջերմաստիճանն է:

Տանձի չհասունացած պտուղները սպառելուց առաջ ենթարկվում են կարգավորվող հասունացման: Կարգավորվող հասունացումը իրականացվում է, ածխաթթու գազի ցածր, թթվածնի բարձր պարունակության և էթիլենի որոշակի քանակի առկայության պայմաններում: Հասունացման աստիճանը պարբերաբար ստուգվում է և երբ այն համարվում է բավարար, իրականացվում է հովացում 20...25⁰C-ից մինչև 3...4⁰C: Նման մոտեցման նպատակը հասունացման տվյալ վիճակի կայունացումը և գերհասունացումը կանխելն է:

Սերկևիլ: Սերկևիլի պտուղների պահպանումը նման տեխնոլոգիա է պահանջում ինչ որ խնձորինը: Սերկևիլի տևական պահպանման ժամանակ պտղամիսը դառնում է չոր սպունգանման: Առավել լավ պահպանում է համարվում կարգավորվող գազային միջավայրում պահպանումը:

Սերկևիլի այն պտուղները, որոնք սպառումից առաջ չունեն բնորոշ հատկանիշներ, ենթարկվում են կարգավորվող հասունացման 20⁰C-ի պայմաններում:

Սերկհիլը այն հումքատեսակներից է, որոնք պահպանելիս մեծ քանակությամբ էթիլեն են արտադրում և դրանց էթիլենի նկատմամբ զգայուն պտուղների հետ համատեղ պահպանումը խորհուրդ չի տրվում:

Ծիրան, դեղձ, սալոր: Ծիրանի, դեղձի և սալորի պահպանման ընթացքում ամենամեծ վտանգի աղբյուրը բորբոսասնկերն են, որոնց գործունեության արդյունքում առաջանում է գորշ փտում:

Արագ հովացումը մինչև 4°C և ցածր ջերմաստիճանային սահմաններ պակասեցնում է բորբոսելու վտանգը:

Պտուղները 0°C -ից ավելի բարձր ջերմաստիճաններում պահպանելիս գրեթե ամբողջապես կորցնում են բույրանյութերը:

Դեղձի վաղահաս սորտերը պահունակ չեն, ուշահաս սորտերը կարելի է պահպանել 1-1.5 ամիս: Որոշ ուշահաս սորտերի պտղամիսը պահպանման ընթացքում չի փափկում, այդպիսի դեպքերում առաջարկվում է պահպանման միջին շրջանում 1-2 օրով պտուղների ջերմաստիճանը բարձրացնել $18...20^{\circ}\text{C}$:

Եթե պահպանման են դրվում, վատ զարգացած պտուղներ դրանք ոչ միայն չեն հասունանում, այլև թառանում և կնճռոտվում են: Դեղձի և ծիրանի պտուղներ պահպանելիս, որոշ երկրներում կատարվում է, արհեստական մոմաշերտով պատում: Երբեմն մոմին ավելացվում է ֆունգիցիդներ:

Դեղձի պտուղների բորբոսասնկերով վարակվելը կանխելու համար առաջարկվում է, պտուղներ մինչև 3ր. կևողությամբ ընկղմել $50...52^{\circ}\text{C}$ -ի տաք ջրում:

խաղող: Ի տարբերություն այլ հումքատեսակների խաղողը նկատելի հասունացման չի երնթարկվում: Պահպանման է դրվում հասունացած խաղող, սակայն բերքահավաքի ուշացումը աշնանային ցրտերի և անձրևների պատճառով ցանկալի չէ: Նման դեպքերում հատիկների վրա առաջանում են մանր ճաքեր, որոնք բորբոսասնկերի թափանցման ուղիներ են:

Բորբոսասնկերի դեմ պայքարի արդյունավետ միջոց է ծծմբային երկօքսիդով (SO_2) մշակումը:

SO_2 -ով առաջին մշակումը իրականացվում է նախնական հովացման սկզբում, խցում ստեղծվում է, SO_2 -ի 0.5% պարունակություն, 20ր. տևողությամբ: Պահպանման ընթացքում 10 օրը մեկ անգամ մշակվում 0.25% ծծմբային երկօքսիդով: Որքան բարձր է լինում պահպանման խցի հարաբերական խոնավությունը այնքան առավել արդյունավետ է ստացվում մշակումը:

Որոշ երկրներում մինչ բերքահավաքը կիրառվում է խաղողի ֆունգիցիդային լուծույթով մշակում:

Ցիտրուսներ: Նարինջի պտուղները պահպանման ընթացքում վնասվում են կապույտ կամ կանաչ բորբոսասանկերով, որոնց դեմ պայքարելու համար խորհուրդ է տրվում օգտագործել բենզիմիդազոլ ֆունգիցիդի լուծույթ կամ դրա և օրտոֆենիլֆենատի կամ 2-ամինոբուրթանի խառնուրդի հետ: Տևական պահպանման ընթացքում ջրի կորստի պատճառով պտղակեղևը կոշտանում է, որը կանխելու համար անհրաժեշտ է սառնարանային խցում ստեղծել հարաբերական խոնավություն կամ պտուղները պատել մոմաշերտով:

Նարինջի կարգավորվող հասունացումը իրականացվում է խցում էթիլենի 0.00005 % պարունակության առկայությամբ 20...25 °C ջերմության պայմաններում մինչև 3 օր տևողությամբ:

Մանդարինի պահպանումը և կարգավորող հասունացումը կատարվում է ինչպես նարինջինը:

Կիտրոնի պտուղները ավելի պահունակ են: Լավ զարգացած կանաչ գունավորմամբ պտուղները հնարավոր է պահպանել մինչև 6 ամիս:

Կիտրոնի պահպանման դրական արդյունք է ստացվում բորաթթվի, բենոմիլի, թիաբենդազոլի և այլ ֆունգիցիդների մոնանյութի հետ համատեղ օգտագործումից:

Նուռ, թուզ, արքայանարինջ: Նռան պտուղները զգայուն են ցածր ջերմաստիճանների նկատմամբ: Պտղի կեղևի բավականին հաստ, բայց փխրուն կառուցվածքը, ծաղկաբաժակի մեծ խորությունը հանդիսանում են բորբոսասանկերի թափանցման ուղիներ:

Նռան սորտերը պայմանականորեն բաժանվում են քաղցր և թթու խմբերի, քաղցր սորտերը առավել չափով են ենթակա բորբոսասանկերի ազդեցությանը:

Նռան պտուղները պահպանվում են 5°C ջերմության և 95% հարաբերական խոնավության պայմաններում:

Թուզը և արքայանարինջը օրգանական թթուներ քիչ են պարունակում, դրանցում ջրի ակտիվությունն ընկած է 86-ից բարձր սահմաններում, ինչով պայմանավորված կրճատվում է պահպանման թույլատրելի տևողությունը:

Պահպանելիս թե թուզը, և թե արքայանարինջը արտադրում են էթիլենի մեծ քանակություններ, ինչով պայմանավորված արագ հասունանում են և գերհասունանում: Առավել նպատակահարմար է այդ պտուղների կարգավորվող գազային միջավայրում պահպանումը:

Թուզը տևականորեն պահպանվում է 1 ... 2 °C ջերմաստիճանի և 75% հարաբերական խոնավության պայմաններում, արքայանարինջը` 1 ... 2 °C ջերմաստիճանի և 85% հարաբերական խոնավության պայմաններում:

Սառնարանային խցերի նախապատրաստում

Սառնարանային խցերը աշխատանքային ամեն փուլից հետո, անհրաժեշտ է մաքրել մնացորդներից և նախապատրաստել աշխատանքային նոր փուլին: Խցերի նախապատրաստումը իր մեջ ընդգրկում է տեխնիկական և սանիտարական միջոցառումներ:

